



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

No 1198-Ա/2

22 նոյեմբերի 2016թ.

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ. Մինասյանին՝ հաստատված ժամանակացույցը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա. Բաղդասարյանին՝ հաստատված ժամանակացույցը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված՝

ՀՀ կրթության և գիտության
նախարարի 2016 թ. նոյեմբերի 22-ի
N1198-Ա/2 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

Ա Ռ Ա Ր Կ Ա	Օ Ր Ե Ր
«Հայոց լեզու և հայ գրականություն» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 26-ին
«Մաթեմատիկա» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 28-ին
«Հայոց պատմություն» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 29-ին
«Ռուս գրականություն» /բանավոր/ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝	2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում
«Մայրենի լեզու և գրականություն» /բանավոր/ ազգային փոքրամասնությունների դասարանների համար՝	2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում
«Ֆիզկուլտուրա» /ամփոփիչ ստուգարք/	2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում